ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 1
ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐԻ ՊԱՇՏՈՆՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԱՌԱՋԱԴՐՎՈՂ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

19 հունվարի 2024 թվական

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատավորի պաշտոնում Հայաստանի Հանրապետության կողմից առաջադրվող թեկնածուների ընտրության հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) նիստը գումարվեց 2024 թվականի հունվարի 19-ին՝ ժամը 12:00-ին, ՀՀ Բարձրագույն դատական խորհրդի վարչական շենքում: Նիստը վարում էր Հանձնաժողովի տարիքով ավագ անդամ, «Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակի» ղեկավար Արթուր Սաքունցը:

ՄԱՍՆԱԿՑՈՒՄ ԷԻՆ՝

Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարանի նախագահ	Արման Դիլանյանը
Հայաստանի Հանրապետության Վճռաբեկ դատարանի նախագահ	Լիլիթ Թադևոսյանը
Հայաստանի Հանրապետության նախագահի աշխատակազմի ղեկավարի տեղակալ	Խաչատուր Պողոսյանը
Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազ	Աննա Վարդապետյանը
Մարդու իրավունքների պաշտպան	Անահիտ Մանասյանը
Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարար	Գրիգոր Մինասյանը
Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարի տեղակալ	Պարույր Հովհաննիսյանը
Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի նախագահ	Սիմոն Բաբայանը
ՀՀ Ազգային ժողովի մարդու իրավունքների պաշտպանության և հանրային հարցերի մշտական հանձնաժողովի նախագահի տեղակալ	Ռուստամ Բաքոյանը

Նիստն արձանագրում էր ՀՀ վարչապետի աշխատակազմի արձանագրային բաժնի մասնագետ Լիլիթ Սիրադեղյանը:

Ա. Սաքունցը Հանձնաժողովի հաստատմանը ներկայացրեց նիստի օրակարգային հարցերը:

ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ

Նիստի ընթացքում քննարկվեցին Հանձնաժողովի կազմի և անդամների փոխարինման կարգի հետ կապված հարցեր: Այնուհետև քննարկման առարկա դարձավ Հանձնաժողովի անդամների կազմից Հանձնաժողովի նախագահի ընտրության հարցը: Արդարադատության նախարար Գրիգոր Մինասյանը որպես Հանձնաժողովի նախագահի թեկնածու առաջարկեց Սահմանադրական դատարանի նախագահ Արման Դիլանյանի թեկնածությունը: Հանձնաժողովը միաձայն բաց քվեարկությամբ որոշեց հանձնաժողովի նախագահ ընտրել Սահմանադրական դատարանի նախագահ Արման Դիլանյանին:

Նիստի ընթացքում քննարկվեցին նաև նիստերի անցկացման կազմակերպատեխնիկական հարցեր, մասնավորապես՝ Հանձնաժողովի նիստերի և հարցազրույցների անցկացման վայրի ընտրության և Հանձնաժողովի գործունեությանն իրավակազմակերպական օժանդակություն ցուցաբերելու հարցերը:

Ձեռք բերվեց հետևյալ պայմանավորվածությունը.

Հանձնաժողովի հաջորդ նիստը տեղի կունենա 2024 թվականի հունվարի 22-ին՝ ժամը 14:30-ին, ՀՀ Վճռաբեկ դատարանի վարչական շենքում:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐ՝

Նիստը վարող՝ **Արթուր Սաքունց** **[ստորագրված]**

Արման Դիլանյան **[ստորագրված]**

Լիլիթ Թադևոսյան **[ստորագրված]**

Խաչատուր Պողոսյան **[ստորագրված]**

Աննա Վարդապետյան **[ստորագրված]**

Անահիտ Մանասյան **[ստորագրված]**

Գրիգոր Մինասյան **[ստորագրված]**

Պարույր Հովհաննիսյան **[ստորագրված]**

Սիմոն Բաբայան **[ստորագրված]**

Ռուստամ Բաքոյան **[ստորագրված]**

Արձանագրող՝ Լիլիթ Սիրադեղյան **[ստորագրված]**